ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-022-15.09.2021,22.10.2021-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ *ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. *Պետությունը երաշխավորում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսնու (կնոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված բարձրագույն և պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ընդունելությունը և ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:*

Հոդված 2. Օրենքի 67-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Պետությունը *սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուսումնական հաստատությունների* վճարովի համակարգի այն սովորողներին, որոնք ուսումնառության ընթացքում ձեռք են բերել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավիճակ, տրամադրում է ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ *սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սովորող անձանց* վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարված փոփոխությունների

Կ-022-15.09.2021-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ *ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 67-րդ ~~հոդվածի 1-ին մասում՝~~

~~1) «ամուսնու (կնոջ)» բառերից հետո լրացնել «եւ» շաղկապը.~~

~~*2) «հավատարմագրված» բառից առաջ լրացնել «գործող» բառը.*~~

~~*3) «դեպքում,» բառից հետո լրացնել «և նրանց ուսումնառությունը» բառերը:*~~

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասը 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. *Պետությունը երաշխավորում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսնու (կնոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված բարձրագույն և պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ընդունելությունը և ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:*

Հոդված 2. Օրենքի 67-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Պետությունը ~~Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված~~ ուսումնական հաստատությունների վճարովի համակարգի այն սովորողներին, որոնք ուսումնառության ընթացքում ձեռք են բերել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավիճակ, տրամադրում է ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

«2. Պետությունը *սույն հոդվածի 1-ին մասով սահմանված* ուսումնական հաստատությունների վճարովի համակարգի այն սովորողներին, որոնք ուսումնառության ընթացքում ձեռք են բերել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավիճակ, տրամադրում է ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ մինչեւ սույն ~~օրենքն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների~~ վրա:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է նաեւ *սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սովորող անձանց* վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված **«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(փաստաթղթային կոդ՝ *Կ-022-15.09.2021-ԳԿ-011/0,22.10.2021-ԳԿ-011/1*) նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ **հեղինակի** (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ **հանձնաժողովի** որոշումը
1.	Կառավարություն	վերնագիրը	«**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**» բառը փոխարինել «**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ**» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	Հոդված 1	Շարադրել նոր խմբագրությամբ՝ ***Հոդված 1.*** «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 67-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «1. *Պետությունը երաշխավորում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսնու (կնոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված բարձրագույն և պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով (քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ընդունելությունը և ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով։*»:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	Կառավարություն	Հոդված 2	«Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Հոդված 3	«մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների վրա» բառերը փոխարինել «*սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սկսվող անձանց վրա*» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն	Հոդված 1	«օրենքում 2-րդ» բառից հետո լրացնել «կամ 3-րդ» բառերը	***-Չի ընդունվել*** *3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների* օրենքով սահմանված շրջանակում ներառելու հնարավորության հարցը կարող է քննարկման առարկա դառնալ հնարավոր շահառուների փաստացի տվյալներն ու ֆինանսական հաշվարկներն ունենալուց հետո: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական	***Չի ընդունվել***

				կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում առկա են կարգավորումներ մարտական գործողությունների մասնակից / որոնց թվում զին. Հաշմանդամ/ ուսանողներին՝ զին.գրքույկում համապատասխան նշման պարագայում/ պետության կողմից ուսման վարձի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ:-	
6.	ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն	Հոդված 1	«ամուսնու (կնոջ)» բառերից հետո լրացնել «եւ» շաղկապը *«հավատարմագրված» բառից առաջ լրացնել «գործող» բառը. «դեպքում,» բառից հետո լրացնել «և նրանց ուսումնառությունը» բառերը:*	*Ընդունվել են Նոր խմբագրությամբ շարադրված* «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին հոդվածում դրանք արտացոլվել են:	*Ընդունվել են*